

**ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ  
ՉԱՐԳԱՑԱԾ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳՈՒՄ**

ՍՈՒՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո անցած 67 տարում մեր երկրում կառուցվեց նոր հասարակարգ՝ զարգացած սոցիալիստական հասարակարգ։ Այդ տարիների ընթացքում սոցիալական հավասարության հաստատմանը համընթաց իրականացվել է փաստական հավասարություն ազգերի ու ազգությունների միջև բոլոր բնագավառներում, այդ թվում կուլտուրայի ու լեզվի, ազգային ինքնագիտակցության ու ազգային հոգեբանության մեջ, կենցաղում և այլուր։ «ՍՍՀՄ կազմավորման 60-րդ տարեդարձի մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ նշված է. «Հասուն սոցիալիզմի բարերար հողի վրա աճում և ամրապնդվում է սովետական ժողովրդի միասնական ինտերնացիոնալ կուլտուրան, որը ծառայում է բոլոր աշխատավորներին, արտահայտում նրանց ընդհանուր իդեալները։ Այն ներառում է ազգային կուլտուրաների նվաճումների և ինքնատիպ ավանդույթների մեջ եղած ամբողջ համանշանակալիւն։ Բովանդակությամբ սոցիալիստական, իր ազգային ձևով բազմազան, իր ոգով և բնույթով ինտերնացիոնալիստական սովետական կուլտուրան դարձել է Սովետական Միության ազգերի ու ազգությունների գաղափարաբարոյական համախմբման մեծ ուժ»<sup>1</sup>։

Սովետական ժողովրդի միասնությունն այսօր ավելի ամուր է, քան եղել է երբևէ։ Բայց, ինչպես նշվեց ՍՄԿԿ ԿԿ-ի 1984 թ. ապրիլին կայացած պլենումում, դա բնավ չի նշանակում, թե ազգային հարաբերություններում բոլոր հարցերն իրենց վերջնական լուծումն են գտել։ Դեռ կատարվելիք շատ բան կա։ «Մի այնպիսի երկրում, ինչպիսին մերն է,— ասաց պլենումում արտասանած իր ճառում ՍՄԿԿ ԿԿ-ի գլխավոր քարտուղար ընկ. Ու. Չեռնենկոն,— բնականաբար շեն կարող օրակարգից հանվել ազգամիջյան հարաբերությունների կատարելագործման խնդիրները։ Սովետները, որոնք ակնառու դեր են խաղացել ազգային գծության վերացման, ժողովուրդների հեղափոխական բարեկամության հաստատման գործում, պետք է լրջորեն խորամուխ լինեն ազգային հարցի բովանդակությանը նաև այն ձևով, ինչ ձևով այն գոյություն ունի զարգացած սոցիալիզմի պայմաններում։ Չէ որ սա հենց այն ոլորտն է, որտեղ բեղմնավոր աշխատանքը անհնար է կատարել այլ կերպ, քան կոլեկտիվիստական, ինտերնացիոնալիստական հիման վրա, հաշվի առնելով գործի բոլոր նրբությունները»<sup>2</sup>։

Մեր երկրում հարգվում է ազգային զգացմունքը, յուրաքանչյուր մարդու ազգային արժանապատվությունը։ Կոմունիստական կուսակցությունը միշտ էլ պայքար է մղել ազգային առանձնահատկությունների արհեստականորեն վերացման, ինչպես նաև առանձին ազգային յուրահատկությունների ուժեղացման դեմ՝ աշխատավորական մասսաներին դաստիարակելով սովետական հայրենասիրության ու սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ոգով։

Չարգացած սոցիալիստական հասարակարգում ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդների ինտերնացիոնալիստական դաստիարակության, տարբեր ազգերի կուլտուրաների զարգացման ու մերձեցման գործում կարևոր նշանակություն ունի լեզուների իրավահավասարության փաստը։ Վ. Ի. Կենինը նշել է, որ

<sup>1</sup> «ՍՍՀՄ կազմավորման 60-րդ տարեդարձի մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը», Երևան, 1982, էջ 13։

<sup>2</sup> «Սովետական Հայաստան», 11. IV. 1984։

«մարքսիստ չէ նա, անգամ դեմոկրատ չէ նա, ուլ չի ընդունում և չի պաշտպանում ազգերի ու լեզուների իրավահավասարությունը»<sup>3</sup>։ Մեր երկրի բազմազգ ժողովուրդների լեզուների իրավահավասարության սկզբունքի լինելու պահանջն իր արտահայտությունն է գտել կուսակցության ծրագրում, որտեղ հատկապես նշված է. «Ժողովուրդների եղբայրական բարեկամության և փոխադարձ վստահության պայմաններում ազգային լեզուները զարգանում են իրավահավասարության և փոխհարստացման հիման վրա»<sup>4</sup>։ Ակնհայտ է, որ մեզ մոտ լեզուների և ժողովուրդների հավասարության սկզբունքը բարձրացված է սահմանադրական դրույթների աստիճանի։ ՍՍՀՄ սահմանադրության մեջ ասված է. «ՍՍՀՄ քաղաքացիները օրենքի առաջ հավասար են, անկախ ծագումից... ռասայական և ազգային պատկանելությունից... լեզվից... և այլ հանգամանքներից»<sup>5</sup>։

Եթե հետադարձ հայացք ձգենք ղեպի ցարական Ռուսաստան, ապա կրտեսենք, որ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը նույնիսկ ճշգրիտ հայտնի չէր, թե քանի ժողովուրդ ու ազգախումբ է ապրում կայսրության սահմաններում։ Պաշտոնական վիճակագրությունը հաշվում էր, որ կայսրության մեջ ապրում էին հարյուրից ավելի ազգություններ, և դրանցից շատերը միավորվում էին մեկ անունով։ Այսպես, օրինակ, ղազախները և կիրգիզները պարզապես կոչվում էին «կիրգիզներ», ադրբեջանցիները և թաթարները՝ «թաթարներ», հյուսիսի բաղդամթիվ ազգություններ անվանվում էին «սամոնդներ» և այլն<sup>6</sup>։ Մինչդեռ ցարական կայսրությունը թե ազգային և թե լեզվական կազմի տեսակետից աշխարհում ամենամեծ խայտաբղետություն ունեցող երկրներից մեկն էր, եթե ոչ ամենամեծը, քանի որ այնտեղ ապրում էին շուրս մեծ լեզվական ընտանիքների (հնդեվրոպական, կովկասյան, ուրալյան, ալթայյան) և հատուկ լեզվական միավոր հանդիսացող պալեոասիական լեզվախմբին պատկանող բազմաթիվ ժողովուրդներ։

Այդ նույն ժամանակահատվածում աշխարհի մի շարք երկրներում (Հնդկաստան, Չինաստան, Ինդոնեզիա, Աֆրիկայի երկրներ) ևս կար լեզվական բազմազանություն, սակայն այնտեղ դրանք հիմնականում միևնույն լեզվաընտանիքին պատկանող լեզուներ էին և գտնվում էին զարգացման համարյա միևնույն աստիճանի վրա։

Ի տարբերություն նշված երկրների, ցարական կայսրության մեջ զարգացման բուրժուական աստիճանի վրա գտնվող ժողովուրդների լեզուները գոյություն ունեին թերզարգացած, ցեղային և կիսանահապետական վիճակում գտնվող ազգախմբերի լեզուների կողքին։ Պարզ է, որ այդ լեզուներն իրենց զարգացման աստիճանով հավասար լինել չէին կարող, որովհետև առաջինները իրականացնում էին լայն հասարակական գործողություններ (պետական, տնտեսական, մշակութային, գիտական և այլն), զարգացած գրավոր լեզուներ էին, իսկ մյուսները սեփական գիր ու գրականություն չունեին և, բնականաբար, չէին կարող ունենալ ժամանակակից գիտության ու տեխնիկայի նվաճումներն արտահայտող տերմիններ և այլն։ Այլ կերպ ասած՝ ցարական կառավարության ազգահալած քաղաքականության հետևանքով մի շարք լեզուներ, զրկված լինելով հասարակական տարբեր ֆունկցիաներ իրականացնելու և նորմալ զարգանալու հնարավորությունից, գտնվում էին անհավասար վիճակում։ Այդ հանգամանքն ուղեկցվում էր նաև լեզուների իրավական անհավասարությամբ։

Անժխտելի պատմական իրողություն է, որ ոչ միայն ցարական կայսրությունում, այլև անցյալի ու ներկայի բոլոր շահագործողական հասարակարգերի բազմազգ պետություններում եղել է ու կա պարտադիր պետական լեզու,

3 Վ. Ի. Լենին, ԵԺ, հ. 24, էջ 157։

4 «ՍՄԿԿ ծրագիրը», Երևան, 1974, էջ 181։

5 «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության սահմանադրություն (հիմնական օրենք)», Երևան, 1979, էջ 17։

6 К. Фортунатов, Национальные области России, СПб., 1906, с. 4.



որը տիրապետող ազգի լեզուն է: Այդպիսի պետական լեզվի առանձնացումը տեղի է ունեցել դեռևս հին Հռոմում և Հունաստանում, ուր լատիներեն և հունարեն լեզուներից բացի բոլոր մյուս լեզուները հայտարարվել են «բարբարոսական լեզուներ» և արգելվել է դրանցով ոչ միայն ուսուցումը, այլև զգալի չափով նաև մարդկանց հաղորդակցումը: Մեր դարում էլ գաղութատեր խոշոր պետությունները իրենց նվաճած երկրներում որպես պաշտոնական հաղորդակցության միջոց բնիկներին պարտադրում էին իրենց լեզուները: Ակնհայտ է, որ այդպիսի պետական լեզվի պարտադրումը հանգեցնում էր պետության կազմի մեջ մտնող մյուս ժողովուրդների լեզուների գործածության զգալի սահմանափակման, զրգալիորեն արգելակում էր նրանց կրթության ու հոգևոր կուլտուրայի, ինչպես նաև տնտեսական ու քաղաքական կյանքի զարգացումը:

Լեզուների գործունեության բնագավառում այդ անհավասարությունը պատմության մեջ առաջին անգամ հաղթահարվեց Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ, ուր ՄՄԿԿ լենինյան ազգային քաղաքականության հետևողական կիրառման շնորհիվ իրականացվեց բոլոր ազգերի իրավական ու փաստական հավասարություն կյանքի բոլոր բնագավառներում, որի հետ և վերացվեց մի լեզվի արտոնյալ վիճակը ու ռեալ հնարավորություններ ստեղծվեցին բոլոր ժողովուրդների լեզուների ազատ գործառնության, դրանց հետագա կատարելագործման ու փոխհարստացման համար: ՄՍՀՄ կազմի մեջ մտնող բոլոր ազգային-պետական միավորումները՝ միութենական և ինքնավար հանրապետությունների, ինքնավար մարզերի ու շրջանների ազգությունների լեզուներն անկաշկանդ իրականացնում են պետական-վարչական, կրթական ու այլ հասարակական ֆունկցիաներ: Միաժամանակ ՄՍՀՄ բարձրագույն պետական մարմինների, մասնավորապես ՍՍՀՄ Գերագույն սովետի պաշտոնական փաստաթղթերը հրապարակվում են բոլոր միութենական հանրապետությունների ազգային լեզուներով: ՄՍՀՄ բոլոր քաղաքացիները սահմանադրական իրավունքով միութենական բարձրագույն մարմիններին կարող են դիմել իրենց ազգային լեզուներով և ստանալ պատասխան նույն լեզուներով:

Ակնբախ է, որ զարգացած սոցիալիզմի պայմաններում ազգերի համակողմանի զարգացումն ու մերձեցումը հանգեցնում է ՄՍՀՄ ժողովուրդների ազգային լեզուների բուռն զարգացման և փոխհարստացման: Սովետական կուլտուրան այսօր էլ ոչ թե ապազգային, ոչ թե միալեզու, այլ բազմազգ, բազմալեզու կուլտուրա է:

Սովետական իշխանության տարիներին ազգային լեզուները զարգացել և հասել են բարձր մակարդակի: Դրա վառ վկայությունն է այն, որ այժմ ՄՍՀՄ-ում ռադիոհաղորդումներ են տրվում 67 լեզուներով<sup>7</sup>, 52 լեզուներով հրատարակվում են դպրոցական դասագրքեր<sup>8</sup>, 42 լեզուներով ցուցադրվում են թատերական ներկայացումներ, 46 լեզուներով հրատարակվում են ամսագրեր<sup>9</sup> և այլն: Մեր երկրի տերիտորիայում հաղորդակցումն անարգել կատարվում է 127 ազգային լեզուներով: Ինչ խոսք, բազմալեզվությունը որոշակի դժվարություններ է ստեղծում ժողովուրդների փոխադարձ շփման համար, որը հաղթահարվում է ռուսերենի միջոցով: Մյուս կողմից՝ բազմալեզվությունը խորհրդանշում է սովետական հասարակության հոգևոր հարստությունը՝ դառնալով սոցիալիստական կուլտուրայի բազմերանգ ու համակողմանի արտահայտման անսպառ աղբյուրը: ՄՍՀՄ-ում ազգային լեզուների զարգացումը դարձել է ժողովուրդների պատմական ամենակարևոր նվաճումներից մեկը:

Ջարգացած սոցիալիզմի պայմաններում, հասարակական կյանքի հիմնական կողմերի հետագա ինտեռնացիոնալացման պայմաններում, հետզհետե առավել կարևոր նշանակություն է ստանում ազգամիջյան հաղորդակցման լե-

<sup>7</sup> М. И. Куличенко, Укрепление интернационального единства Советского общества, Киев, 1976, с. 258.

<sup>8</sup> «Советская школа к 50-летию образования СССР», М., 1973, с. 26.

<sup>9</sup> «Печата. СССР в 1979 году», М., 1980, с. 74.

դուն, առանց որի անհրաժեշտ կլինեն փոխադարձ կապի համար տասնհինգ, եթե ոչ ավելի, լեզուներով կրկնօրինակել բոլոր հանրապետությունների կառուցվածքային փաստաթղթերը: Ազգամիջյան հաղորդակցման համար տեսական ու գործնական առումներով նպատակահարմար է միութենական ամենամեծ և ամենատարածված ազգի լեզվի օգտագործումը: Եվ պատմական օբյեկտիվ հանգամանքների բերումով այդպիսին է դարձել ռուսաց լեզուն:

ՍՄՇՄ-ի կարգավորման 60-ամյակին նվիրված ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի և ՌՍՖՍՀ Գերագույն սովետի համատեղ հանդիսավոր նիստում կարգացած իր զեկուցման մեջ Յու. Վ. Անդրոպովը նշել է. «Երկրի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքում, նրա բոլոր ազգերի և ազգությունների մերձեցման, համաըխարհային քաղաքակրթության հարստություններին նրանց հաղորդակցման մեջ բացառիկ նշանակություն ունեցող գործոնն է ռուսաց լեզուն, որը բնականորեն մտել է ամեն մի ազգության միլիոնավոր մարդկանց կյանքի մեջ»<sup>10</sup>:

Կոմունիզմի հակառակորդները ռուսերենի, որպես ազգամիջյան հաղորդակցման լեզվի, անհրաժեշտությունը փորձում են ներկայացնել որպես ընդհանրապես ազգային լեզուների վերացում, որը պատմական իրողության խեղաթյուրում է:

Նախ, ինչպես նշվել է «Հանրապետությունների հանրակրթական դպրոցներում և մյուս ուսումնական հաստատություններում ռուսաց լեզվի ուսումնասիրման բարելավման լրացուցիչ միջոցառումների մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ, «Մայրենի լեզվի հետ մեկտեղ ռուսաց լեզվին ազատորեն տիրապետելը, ինչպես ճիշտ կերպով նշված է տեղերից ստացվող քաղաքացիների նամակներում, դառնում է օբյեկտիվ անհրաժեշտություն և յուրաքանչյուր քաղաքացու պահանջմունքը, ծառայում է բոլոր ազգերի և ազգությունների բարեկամության ամրապնդման, հայրենական և համաըխարհային մշակույթի բարձրանման, գիտատեխնիկական նվաճումներին նրանց հաղորդակից դարձնելուն»<sup>11</sup>:

Երկրորդ՝ ՍՍՀՄ բոլոր միութենական հանրապետությունների ռուսական դպրոցներում պարտադիր ուսուցանվում են ավյալ հանրապետության բնիկ ազգությունների լեզուն և գրականությունը, նրա պատմությունը:

Վ. Ի. Լենինը, առարկելով իր բերալիներին, որոնք ռուսերեն լեզվի արտոնյալ վիճակի պատմական անհրաժեշտությունը պատճառաբանում էին նրանով, որ այն «մեծ է և հզոր» և Ռուսաստանի բոլոր բնակիչները պետք է այն իմանան, գրել է. «Մենք ձեռնից ավելի ենք ցանկանում, որպեսզի Ռուսաստանում բնակվող անխտիր բոլոր ազգերի հարստահարված դասակարգերի միջև ստեղծվի որքան հնարավոր է ավելի սերտ հաղորդակցություն և եղբայրական միասնություն, և մենք, հասկանալի է, կողմնակից ենք այն բանին, որպեսզի Ռուսաստանի յուրաքանչյուր բնակիչ հնարավորություն ունենա սովորելու ռուսաց մեծ լեզուն: Մենք չենք ցանկանում միայն մի բան՝ հարկադրանքի տարրը»<sup>12</sup>:

Ներկայումս սովետական ժողովուրդների անշեղ մերձեցման, նրանց եղբայրական բարեկամության և համագործակցության ամրապնդման պրոցեսում կարևոր դեր է խաղում ռուսաց լեզուն, որին բազմաթիվ ազգերի ներկայացուցիչներ տիրապետում են որպես երկրորդ լեզու 1959 թ. մարդահամարի արդյունքներով, ՍՍՀՄ-ի ոչ ռուս բնակչության 10,8%-ն է ռուսաց լեզուն համարել մայրենի լեզու, 1970-ին՝ 11,5%-ը, իսկ 1979-ին այն հասել է 13%-ի: Ամբողջությամբ վերցրած 1979 թ. մեր երկրի ամբողջ ազգաբնակչության 82,6%-ն ազատ տիրապետում էր ռուսերենին<sup>13</sup>:

10 Յու. Անդրոպով, ՍՍՀՄ 60 տարին, Երևան, 1983, էջ 9:

11 «Սովետական Հայաստան», 28. V. 1983:

12 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 24, էջ 359:

13 «Итоги всесоюзной переписи населения в 1970 году», т. 4, с. 26—27; «Население СССР», М., 1980, с. 26—27.



Հայաստանում 1979 թ. մարդահամարի տվյալներով բնակչության 3037,3 հազարից 30001 հազար մարդ կամ հանրապետության ամբողջ բնակչության 98,8%-ը մայրենի լեզուն է համարել իր ազգության և 1,2%-ը՝ այլ ազգությունների լեզուները: Ուշագրավ է, որ հայերենը որպես մայրենի լեզու նշել են 2710 հազար հայեր, կամ հանրապետության հայ բնակչության 99,4%-ը, իսկ տարբեր ազգերի և ազգությունների 81,6 հազար մարդիկ հայերենը անվանել են իրենց երկրորդ լեզուն, որին տիրապետում են ազատ: Միաժամանակ ՀՍՍՀ-ում ապրող տարբեր ազգերի ու ազգությունների պատկանող 964,1 հազար մարդ որպես երկրորդ լեզու ցույց են տվել ռուսերենը, որին ազատ տիրապետում են (1970-ին՝ 537,8 հազար մարդ)<sup>14</sup>:

Ռուսաց լեզվի դերը ավելի է մեծանում մեր օրերում: Ներկայումս այդ լեզուն խոսողների թվով երրորդն է աշխարհում<sup>15</sup>:

Նկատի ունենալով ռուսաց լեզվի իմացության անհրաժեշտությունը՝ ՍՄԿԿ Կենտկոմի 1983 թ. հունիսյան պլենումը նշեց, որ «քիչ չեն այն փաստերը, երբ ռուսաց լեզվի թույլ իմացությունը սահմանափակում է մարդու հաղորդակցությունը ինտերնացիոնալ մշակույթի հարստություններին, նեղացնում է նրա գործունեության և շփման շրջանակները»<sup>16</sup>: Ահա թե ինչու ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը վերջերս որոշում ընդունեցին ստեղծելու այնպիսի պայմաններ, որոնք կնպաստեն ազգային հանրապետությունների բնակչության՝ ռուսաց լեզուն սովորելուն:

Այժմ մեր երկրի բնակչության 82%-ը տիրապետում է ռուսաց լեզվին: Ազգային-ռուսերեն երկլեզվության պայմաններում որևէ կերպ չեն ոտնահարվում ազգային շահերը՝ և ոչ էլ տեղի է ունենում սովետական ազգերի լեզուների ձուլում, այլ ապահովվում է ժողովուրդների կուլտուրայում ինտերնացիոնալիստականի և ազգայինի ներդաշնակ զուգորդումը: Ազգային-ռուսերեն լեզուների իմացության անհրաժեշտությունը ոչ միայն հնարավոր է դարձնում ծանոթանալը ազգային-ռուսական ու համաշխարհային կուլտուրաներին, այլև խթանում է սոցիալիստական ազգերի կուլտուրական ու տնտեսական համագործակցությունը և փոխադարձ շփումը: Այդ հարցը մի քանի անգամ քննարկել է 244 Կենտկոմը, հատկապես 244 XXIV համագումարում, 244 Կենտկոմի և ՀՍՍՀ Մինիստրների սովետի 1973 թ. համատեղ նիստում և այլ խորհրդակցություններում:

244 Կենտկոմի 1983 թ. հուլիսի 12-ի պլենումում ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը նշել է. «Ձի կարելի կրթված ու բազմակողմանիորեն զարգացած մարդուն պատկերացնել առանց լեզվի բարձր կուլտուրայի: Դպրոցը պետք է մշտապես կատարելագործի ու խորացնի մայրենի լեզվի, նրա հետ մեկտեղ ռուսաց լեզվի ուսումնասիրումն ու խոր յուրացումը»<sup>17</sup>:

Պլենումում նշվեց, որ անհրաժեշտ է այսուհետև էլ կատարելագործել ռուսերեն լեզվի ուսուցումը ինչպես հանրակրթական դպրոցներում, այնպես էլ միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Ազգային լեզուների զարգացման և նրանց փաստական հավասարության հաստատման տեսակետից կարևոր տեղ է գրավում ազգերի մշակութային կյանքի բոլոր կողմերի՝ կրթության, գիտության, գրականության ու արվեստի և այլնի զարգացումը: Հանճարեղ բանաստեղծ Հովհ. թումանյանը գրել է. «Գիտությունը, գրականությունն ու արվեստն են լցնում ժողովուրդներին բա-

14 «ՍՍՀՄ բնակչությունը. ՀՍՍՀ բնակչությունը», Երևան, 1980, էջ 45—46:

15 «Русский язык в современном мире», М., 1974, с. 58.

16 «ՍՄԿԿ Կենտկոմի 1983 թ. հունիսյան պլենումի նյութերը» («Կուսակցական խոսք», 1983, № 13, էջ 35):

17 Ե. Ս. Դեմիրճյանի զեկուցումը 244 Կենտկոմի 1983 թ. հուլիսի 12-ի պլենումում («Լենինյան ուղիով», 1983, № 8, էջ 23):

մանող անդունդը և միայն դրանք կստեղծեն գալիք լավագույն կյանքն ու ճշմարիտ մարդուն»<sup>18</sup>,

Չարգացած սոցիալիզմի պայմաններում մշակույթի, գիտության, արվեստի ու գրականության բնագավառներում ձեռք բերված հաջողությունները կարելի է լուսաբանել յուրաքանչյուր ազգային հանրապետության օրինակով։ Որպես օրինակ վերցնենք Սովետական Հայաստանի միայն ժողովրդական կրթության բնագավառը։ Մինչև հեղափոխությունը Հայաստանում, ըստ 1897 թ. մարդահամարի տվյալների, 9—45 տարեկան մարդկանց մեջ կրթվածները կազմել են ընդամենը 9,2%-ը։ Հեղափոխությունից հետո սոցիալիստական վերափոխումների շնորհիվ կրթված մարդկանց թիվը արդեն 1926 թ. ավելացել էր 4 անգամ, իսկ 1979 թ. մարդահամարը ցույց տվեց, որ Հայաստանը դարձել է համասարած գրագիտության երկիր և 9—49 տարեկան բնակիչներից անգրագետ էր միայն 0,1%-ը<sup>19</sup>։

ՀՍՍՀ-ում, ինչպես և ամբողջ Միության մեջ, իրականացվում է բնդհանուր պարտադիր միջնակարգ կրթություն։ Մինչև հեղափոխությունը մեր երկրի շատ ու շատ ժողովուրդների զավակներ հնարավորություն չունեին բարձրագույն կրթություն ձեռք բերել, որովհետև չունեին նման կրթության պահանջ զգացող տնտեսություն ու պետական կյանք։ Նրանց մեծ մասը զուրկ էր ուսուցանող կադրերից, իսկ շատերը չունեին նույնիսկ գիր ու գրականություն։

Լենինյան ազգային քաղաքականության հետևողական կիրառման շնորհիվ մեր երկրում իրականացվել է փաստական հավասարություն միջնակարգ և բարձրագույն կրթության բնագավառում։ Այդ են վկայում 1959, 1970 և 1979 թվականների մարդահամարների տվյալները (տե՛ս աղյուսակը)։

Աղյուսակ

Միութենական հանրապետությունների բնակչության կրթական մակարդակի աճը<sup>20</sup>

Միութենական հանրապետություններ	10 և ավելի տարիք ունեցող բնակչության 1000 մարդուն ընկնում է բարձրագույն և միջնակարգ (լրիվ և թերի) կրթությամբ անձ			ժողովրդական տնտեսության մեջ զբաղված 1000 մարդուց բարձրագույն և միջնակարգ (լրիվ և թերի) կրթություն ունեցողներ		
	1959 թ.	1970 թ.	1979 թ.	1959 թ.	1970 թ.	1979 թ.
ՌՍՖՍՀ	361	489	645	440	656	803
Ուկրաինական ՍՍՀ	373	494	630	438	658	813
Բելուսական ՍՍՀ	304	440	594	331	594	763
Ուզբեկական ՍՍՀ	354	458	639	447	663	848
Ղազախական ՍՍՀ	347	468	633	497	654	807
Վրացական ՍՍՀ	448	554	698	492	711	856
Աբրբեջանական ՍՍՀ	420	541	673	475	708	858
Լիտվական ՍՍՀ	232	382	558	250	496	711
Մոլդովական ՍՍՀ	264	397	572	280	508	725
Հատվիական ՍՍՀ	431	517	645	502	661	795
Կիրգիզական ՍՍՀ	342	552	614	429	643	804
Տաջիկական ՍՍՀ	325	420	578	407	602	770
Հայկական ՍՍՀ	445	516	713	527	697	868
Թուրքմենական ՍՍՀ	387	475	620	497	682	823
Էստոնական ՍՍՀ	386	505	630	448	660	786

18 Հոգև. Թոմասյան, Երկիր, հ. 4, Երևան, 1970, էջ 275։

19 «ՍՍՀՄ բնակչությունը. ՀՍՍՀ բնակչությունը», էջ 40։

20 Տե՛ս «ՍՍՀՄ բնակչությունը. ՀՍՍՀ բնակչությունը», էջ 23—24։



Հայկական ՄՍՀ-ի օրինակից երևում է, որ եթե 1959 թ. 10 տարեկանից բարձր տարիք ունեցող 1000 հոգուց միայն 445 հոգի ուներ միջնակարգ և բարձրագույն կրթություն, ապա 1979 թ. այդ թիվը հասել է 713 մարդու նույն թվականներին ժողովրդական տնտեսության մեջ զբաղված 1000 մարդուց նույն կրթություն ունեցողների թիվը 527-ից հասել է 868-ի: Զարգացած սոցիալիզմի պայմաններում կրթությունը միաժամանակ և՛ ինտերնացիոնալ է, և՛ ազգային: Ինտերնացիոնալիզմը դրսևորվում է կրթական համակարգի ու բոլոր ազգերի հավասար իրավունքների, բոլոր ազգերի ներկայացուցիչների համատեղ ուսուցման մեջ:

Գնալով էլ ավելի է զարգանալու կրթության ինտերնացիոնալ բընույթը: Այդ է խոստանում սոցիալիզմի ազգային-լեզվական քաղաքականության ապագան: Բայց, իհարկե, դա չպետք է արվի ազգային լեզուներով կրթության հաշվին: Մեր երրորդ 60-ամյա փորձը լիովին հաստատում է, որ ինտերնացիոնալիզմը ոչ թե ուսուցման լեզվով է որոշվում, այլ ուսուցանվող գաղափարներով: Մյուս կողմից, ինչպես նշվել է ՄՍԿԿ Կենտկոմի վերը բերված որոշման մեջ, մեր երկրում առնալ կերպով ապահովված է մայրենի լեզվով և Սովետական Միության ժողովուրդների մյուս լեզուներով սովորելու բոլոր քաղաքացիների իրավունքը»<sup>21</sup>:

Այսպիսով, մայրենի լեզվի նկատմամբ տաժած անհագուրդ սերը ամենեվին չի խանգարում ուսուցիչ լեզվի տիրապետմանն ու օգտագործմանը, մանավանդ որ ռուսերենի ուսումնասիրումը կամավոր գործ է և հաստատում է ՄՍԿԿ-ի որդեգրած սկզբունքը՝ «հետագայում ևս ապահովել ՄՍՀՄ ժողովուրդների լեզուների ազատ զարգացումը»: Այդ են վկայում ՄՍՀՄ 1979 թ. համամիութենական մարզահամարի տվյալները, որոնց համաձայն Սովետական Միության բնակչության 93,9%-ը մայրենի լեզու է համարում իր ազգության լեզուն:

ՄՍՀՄ-ի ազգերի մշակույթների համագործակցության, ազգային և ինտերնացիոնալ կուլտուրաների զուգակցման վառ օրինակ են գրի և գրականության, արվեստի և գիտության, ինչպես նաև հոգևոր կյանքի մյուս բոլոր բնագավառներում 60 տարվա ընթացքում ձեռք բերված հաջողությունները: Այսուհետև ևս, ՄՍՀՄ կազմավորման 60-ամյակին նվիրված հանգիսավոր նիստում նշվեց «հարկավոր է համառորեն որոնել աշխատանքի նոր, այսօրվա պահանջներին համապատասխանող մեթոդներ և ձևեր, որոնք թույլ տան ավելի բեղմնավոր դարձնել կուլտուրաների փոխադարձ հարստացումը, բոլոր մարդկանց առջև բացել էլ՝ ավելի լայն ճանապարհ դեպի այն լավագույնը, ինչպես աալիս է մեր ժողովուրդներից յուրաքանչյուրի կուլտուրան»: Այս է լեռնիյան ազգային քաղաքականության այսօրվա գարգացման օրյեկտիվ ընթացքը:

## ВЗАИМОВЛИЯНИЕ НАЦИОНАЛЬНЫХ ЯЗЫКОВ В РАЗВИТОМ СОЦИАЛИСТИЧЕСКОМ

### ОБЩЕСТВЕ

СУРЕН АВЕТИСЯН

### Резюме

Одним из важнейших социальных последствий социалистического строительства в СССР явилось преодоление бывшего неравенства наций и национальностей и достижение их расцвета и сближения во всех областях жизни, что стало закономерностью их развития в условиях со-

циализма. Важнейшим результатом этого процесса явилось установление правового и фактического равенства больших и малых национальных языков, расширение сфер их функционирования, достижение их тесного взаимодействия и взаимообогащения. Особую роль в этом деле играл и играет русский язык, который превратился в могучее средство межнационального общения и сближения наций. В период развитого социализма происходит дальнейшее усовершенствование и взаимообогащение национальных языков, еще больше расширяется сфера их функционирования, а также дальнейшее взаимообогащение. Все это свидетельствует о том, что в условиях развитого социализма происходит процесс гармоничного сочетания национальных и интернациональных интересов народов нашей страны и в области развития национальных языков и культуры.